ԱԶԳԱՅԻՆ

Անցեալ 10-ն տօնուեց Վ.ԵՀափառ Հայրապետի Օծման երկրորդ տարեդարձը։

Նախընթաց երեկոյեան եկեղեցական թափօրով Վ.ԵՀափառ Հայրապետը եկեղեցի եկաւ և Իջման սեղանի առաջ կատարուեց երեկոյեան ժամերգութիւնը։

Առաւօտը միաբանական ուխտը ձեմարանի և Վաղարշապատի տղայոց ու օրիորդաց դպրոցների աշակերտները իրանց վարժապետներով ու վարժուհիներով և խուռն բազմութիւն իրարուց Վ.ԵՀարանի գաւիթը։ ուր և բուռ սովորութեան մոգթանք կատարուեց։ այնուհետև թէ միաբանք և թէ այլք կարգ բուռ կարգէ բարձրացան Վ.ԵՀարան և համբուրելով Վ.ԵՀափառ Հայրապետի աջը շնորհաւորեցին Նորին Օծութեան Օծման տարեդարձը։

Թէ ձեմարանի աշակերտների և թէ Վաղարշապատի դպրոցների կողմից ճառեր մատուցուեցին Վ.ԵՀափառ Հայրապետին։

Հանդիսաւոր Ս. պատարագից յետոյ որին ներկայ էր և Վ.ԵՀափառ Հայրապետը։ միաբանութեան ամառնային և ձմեռնային սեղաններում ճաշ արուեց բազմաթիւ անձանց։ ճաշի ժամանակ Գեր. Տ. Մատթիա եպիսկոպոս Օրմանեան աւուր պատշաճին առենախօսութիւն արեց և ձեմարանի աշակերտներն էլ մէջ ընդ մէջ երգեցին։

Երեկոյեան ճրագալոյց կար. և ձեմարանի աշակերտները իրանց ներդաշնակ երգերով միխիթարում էին խռնեալ բազմութեանը։

ՆՈՒԷՐ Կ. ՊՕԼՍԻՅ ԵՒ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

Մայր Տաճարի վերանորոգութեան գործը Վ.ԵՀափառ Հայրապետի հոգսերից առաջինը լինելով, Նորին Վ.ԵՀափառութիւնը նախքան գործին ձեռնամուխ լինելը՝ բարեհաճեց դիմել հմուտ ճարտարապետաց խորհրդատուութեան. և առ այժմ ժողովրդին չվնասելու համար Սինոդի միջոցաւ պատուիրեց վիճակաց առաջնորդներին իրանց թեմի եկեղեցիներից նոցա կարո-